

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԱՅ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ, ՈՐ Ի ՓԱՐԻԶ ԵՎ ՄԵԾԱՐԳՈՅ ԱՆԴԱՄՈՅ ՆՈՐԻՆ, ՀԱՐԱՁԱՏԱՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայ Ժողովրդի ազնիւ բարեկամներ,

Դարերի ընթացքում մեր Հայրենի Երկրի դիրքի և քաղաքական կյանքի առանձնահատուկ պայմանների պատճառով, երբեմն ևս վայրագ ու արյունռուշտ ազգերի ընչասեր և կողոպտիչ հակումներին հագուրդ տալու նպատակով, Հայաստանը մշտական պատերազմների ասպարեզ է հանդիսացել, թշնամու ոտքերի տակ կոխան եղել, ավերի ու թալանի ասպարեզ դարձել,որի պատճառով և Հայ Ժողովուրդը ստիպված է եղել թողնել իր Հայրենի Երկիրը և գաղթել այլ երկիրներ՝ ապահով ապրելու տենչով։ Նկատի չառնելով սակայն, որ օտարության մեջ էլ ստիպված պիտի լինի օտարի ծանր լուծը տանել, դիմազուրկ դառնալ, իր մայրենի լեզուն և իր հերոսական պատմությունը մոռանալ և ձուլման ու անէացման անխուսափելի վտանգին ենթարկվել։

Այսօր առաջին անգամն է, որ Հայ Ժողովուրդը իր տարագիր ծանր վիճակի մեջ, պահպանած լինելով իր ազգային ինքնագիտակցությունը, լսում է Հայրենի հարազատ երկրի և Հայ Եկեղեցու հրավերն ու կոչը, արձագանքում է նորան և Հայրենադարձի փրկարար ուղին բռնում։

Հայ Ազգի հավատարիմ զավակներ,

Հայրենասիրության և Ազգահավաքման վառ զգացմունքներով տոգորված և քաղաքական իմաստությամբ ղեկավարված՝ ըմբռնել եք, որ այսօր Հայ Ժողովուրդի առաջ հրամայաբար ծառացած է ճակատագրական մի խնդիր, Հայ Ժողովրդի ազգահավաքման խնդիրը Հայրենի հողի վրա։

Հայ Ազգի բազմադարյան հավատարիմ և անդավաճան պաշտպան Մայր Աթոռը ուղղել է Սփյուռքի տարագիր Մեր զավակներին իր հովվական կոչը՝ Հայրենադարձի կոչը։ Մեր Հայրենիքի հարազատ Իշխանությունն էլ բացել է Սփյուռքի տարագիր Հայության առաջ Հայրենիքի դռները, որով ոչ միայն ազատում է ազգային դիմազրկման ու ձուլման, օտարության մեջ հյուծվելու և անէանալու վտանգից, այլ և լիակատար հնարավորություն է ստեղծում թվով աճելու, ֆիզիկապես զորանալու և հայրենի հողի վերա, գոտեպնդված կուլտուրապես ու տնտեսապես մեծ հաղթանակներ տարած և վերելքի ճամբան բռնած հարազատների մերձավորությամբ, նոր զարկ ու թափ տալու հայ մշակույթի անանխընթաց զարգացման, Հայ Ժողովրդի բարեկեցության և ազգային հզորության ամրապնդման։

Դուք, որ անձամբ ոգևորվել եք և Հայ Ժողովրդին ոգեշնչել այդ մեծ գաղափարով, արբազան պարտականություն ունիք վառ և

անշեջ պահել այդ մեծ գաղափարը նորա մեջ, այլ և զուրգուրել ու ծավալել համազգային խանդավառությունը, որովհետև այդ ճանապարհով է միայն հնարավոր զորանալ, աճել և մեր արդար Դատի հաղթանակը ապահովել։

Հայրապետական օրհնությունս Հայրենադարձի և Ազգահավաքի եռանդուն և ազնիվ Գործիչներիդ։

Ամենակալի Աջը պահապան և հովանի լինի Հայ Ժողովրդի վերա, որ նա հաջողություն և հավետ օրհնյալ ի Տյառնե և ի Մենջ. ամեն։

Ողջ լերուք, զորացյալ շնորհոք Ս. Հոգվույն

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն մարտի
1948 ամի Փոկչական
ի Տոմարիս ՌՃՂԷ
ի չորրորդում ամի Հայրապետութեան մերոյ
Ի Ս. Էջմիածին